

Կ-022¹-20.07.2012-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում.

1. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում.».

2. ուժը կորցրած ճանաչել 15-րդ կետը:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 4-րդ հոդվածում.

1. վերնագիրը «Պետական» բառից հետո լրացնել «և համայնքային» բառերով.

2. 1-ին մասում «(բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների օգնականների պաշտոնների)» բառերը փոխարինել «(բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, Երևանի գլխավոր ճարտարապետի, Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների օգնականների, Երևանի գլխավոր ճարտարապետի օգնականի պաշտոնների)» բառերով.

3. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1. կետով.

«1.1. Համայնքային պաշտոններն են՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, Երևանի գլխավոր ճարտարապետի, Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների օգնականների, Երևանի գլխավոր ճարտարապետի օգնականի Հայաստանի Հանրապետության համայնքների ավագանիների անդամների, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնները:».

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14-րդ կետով.

«14. Համայնքային ծառայության պաշտոնը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն է, որն զբաղեցնելու առանձնահատկությունները սահմանվում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը «պաշտոն» բառից հետո լրացնել «(բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի)» բառերով:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, ինչպես նաև համայնքային ծառայության» բառերը:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «բաժնեմաս» բառը փոխարինել «մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ)» բառերով:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը «աշխատանքից» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերի» բառերով:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասում «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով:

ՀՈՂՎԱԾ 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության հեղինակը	Հոդվածը	Առաջարկությունը	Եզրակացություն
ՀՀ ԱԺ պատգամավոր Արաիկ Հովհաննիսյան (առաջարկությունը հնչեցվել է բանավոր)	«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 9-րդ հոդված	Հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում «հինգ» բառը «ուր» բառով փոխարինելու վերաբերյալ:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Արփինե Հովհաննիսյան (առաջարկությունը հնչեցվել է բանավոր)	«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդված	Հոդվածից «և այլն» բառերը հանելու վերաբերյալ:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 9-րդ հոդված	Հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի անձնագրով ներկայացվող չափանիշների մեջ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ աուդիտի ոլորտում երեք տարվա մասնագիտական գործունեության փորձի չափանիշը ներառելու վերաբերյալ:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և	Հոդվածի 1-ին մասից ««օրենքով» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»	Ընդունվել է:

	լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 26-րդ հոդված	բառերով» բառերը հանելու վերաբերյալ:	
ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում «հունիսի 14-ի» բառերը «մայիսի 26-ի» բառերով փոխարինելու վերաբերյալ:	Ընդունվել է: